**ՆԱԽՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ (ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ) ԿՐԹՈՒԹՅԱՆ 0732.10.4 «ԳԱԶԱՅԻՆ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՍՏՈՐԳԵՏՆՅԱ ԳԱԶԱՏԱՐՆԵՐԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՇԱՀԱԳՈՐԾՈՒՄ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ 0732.10.01.4 «ԳԱԶԱՅԻՆ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ՆՈՐՈԳՄԱՆ ՓԱԿԱՆԱԳՈՐԾ» ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐՆ ԱՎԱՐՏԱԾ ՇՐՋԱՆԱՎԱՐՏԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ**

5. Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության 0732.10.4 «Գազային սարքավորումների և ստորգետնյա գազատարների տեխնիկական շահագործում» մասնագիտության 0732.10.01.4 «Գազային սարքավորումների տեխնիկական շահագործման և նորոգման փականագործ» տեսակների և մասնագիտական պարտականությունների:

6. Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության 0732.10.4 «Գազային սարքավորումների և ստորգետնյա գազատարների տեխնիկական շահագործում» մասնագիտության 0732.10.01.4 «Գազային սարքավորումների տեխնիկական շահագործման ու նորոգման փականագործ» որակավորմամբ մասնագետն իրականացնում է հետևյալ զբաղմունքները.

1) կենցաղային ու արդյունաբերական ձեռնարկությունների գազային սարքավորումների ու դրանց համակարգերի չափանշման, հավաքակցման (մոնտաժման) ու տեղակայման աշխատանքներ իրականացնող,

2) կենցաղային ու արդյունաբերական ձեռնարկությունների գազային սարքավորումների ու դրանց համակարգերի փորձարկման, շահագործման ու սպասարկման աշխատանքներ իրականացնող,

3) կենցաղային ու արդյունաբերական ձեռնարկությունների գազային սարքավորումների ու դրանց համակարգերի ստուգման, սարքահանման (ապամոնտաժման), ընթացիկ ու կապիտալ նորոգման աշխատանքներ իրականացնող,

4) գազակարգավորման կետերի և կայանքների հավաքակցման (մոնտաժման), սպասարկման, նորոգման ու սարքահանման (ապամոնտաժման) աշխատանքներ իրականացնող:

7.Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության 0732.10.4 «Գազային սարքավորումների և ստորգետնյա գազատարների տեխնիկական շահագործում» մասնագիտության 0732.10.01.4 «Գազային սարքավորումների տեխնիկական շահագործման և նորոգման փականագործ» որակավորմամբ մասնագետի մասնագիտական գործունեության պարտականություններն են.

1) անհատ սպառողների (բնակիչների) ներբնակարանային գազային սարքավորումների չափանշումը, հավաքումը, հարմարեցումը, հավաքակցումը, փորձարկումը, շահագործումը, սպասարկումը,

որակավորման մասնագետի մասնագիտական գործունեության բնութագիրը տրվում է ըստ զբաղմունքների

8) գազային սարքավորումների շահագործման ու նորոգման փականագործական հարմարանքներ

նորոգումը և սարքահանումը,

2) կենցաղային ու արդյունաբերական ձեռնարկությունների գազային սարքավորումների ու դրանց համակարգերի և գազակարգավորման կետերի ու կայանքների չափանշումը, հավաքումը, հարմարեցումը, հավաքակցումը, փորձարկումը, շահագործումը, սպասարկումը, նորոգումը և սարքահանումը,

3) գազային սարքավորումների անսարքությունների բացահայտումը և դրանք ծնող պատճառների վերացումը,

4) անհրաժեշտ գազային սարքավորումներ շահագործող ու նորոգող փականագործի գործիքներ ընտրելն ու դրանց ճիշտ օգտագործելը,

5) գազի բնութագրիչների (պարամետրերի) չափագրմանն անհրաժեշտ սարքերի և այլ նյութերի ընտրելն ու դրանց ճիշտ օգտագործելը,

6) կլանողական (աբսորբցիոն) գազազտիչների ճիշտ օգտագործումը,

7) հորատման, պատերի գայլիկոնման (շաղափման), հավաքակցման, գամակարման, զոդման, պատրաստելը,

9) գազային սարքավորումները ենթակարգաբերելը,

10) գազի հնարավոր արտահոսքերը բացահայտելը և դրանք վերացնելը,

11) տարբեր բարդության գազամատակարարման բաղադրամասերի և հանգույցների փականագործական մշակում կատարելը,

12) նոր գազային սարքավորումներ գործարկելը, լրահավաքելը, դրանք համապատասխան քսայուղերով և այլ նյութերով հագեցնելը,

13) գազային սարքավորումների առանձին հանգույցները և ագրեգատները (աշխատամասերը) քանդելը, վնասված մասերը նորերով փոխարինելն ու դրանք վերստին հավաքելը,

14) բարձր ճշտություն պահանջող հավաքման տեխնոլոգիական գործընթացներ վարելը,

15) գազային սարքավորումների շահագործման և նորոգման տեխնիկական պահանջներն ու պայմանները խստագույնս պահպանելը,

16) բրիգադի անդամներին ղեկավարելը,

17) բովանդակությամբ հարակից մասնագիտությունների պարտականություններ կատարելը,

18) գազամատակարարաման համակարգերում և սարքավորումներում անսարքություններն ու դրանց դրանք ծնող պատճառների բացահայտումը,

19) գազամատակարաման համակարգերի և սարքավորումների ստուգումն ու փորձարկումը,

20) ապահովել գազամատակարաման ու գազ սպառող սարքավորումների տեխնիկական սունձման և կապակցման ապարատների, գործիքների ու սարքերի ընտրելն՝ ըստ շինարարական հատակագծերի և նախագծերի,

սարքավորումների և ստորգետնյա գազատարների տեխնիկական շահագործում» մասնագիտության

շահագործումը  և սպասարկումը: